1341

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«29» 09 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0174-23

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Վահան Ռշտունի***
ք.Երևան, Գուլբեկյան փ., 4/2

Գործունեությունը՝ ***Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի վարչական սահմանում տուրիզմի և հանգստի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0174-23

«29» 09 **2023թ.**

Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի վարչական սահմանում տուրիզմի և հանգստի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Քաղաքացի Վահան Ռշտունի
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ) քաղաքացի Վահան Ռշտունու կողմից նախատեսվում է կառուցել տուրիզմի և հանգստի համալիրի:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել Ա.Կյնազյանի կողմից տրված լիազորագիրը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման թիվ 1 հողամասը N 06082021-06-0026վկայականը /ծածկագիրը՝ 06-009-0101-0021/ 1.98156 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խոտհարք, թիվ 2 հողամասը N 19092022-06-0045 վկայականը / ծածկագիրը՝ 06-009-0122-0031/ 2.400314 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման, իրավունքի տեսակը՝ սեփականություն, թիվ 3 N 31082022-06-0030 վկայականը /ծածկագիրը՝ 06-009-0121-0021/ 1.43147 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահող, իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 5.813344հա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը, որպես քաղաքաշինական գործունեություն հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության/ այսուհետ՝ համալիր/ հողամասը գտնվում է Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրից 590–670մ, իսկ Լեջան գյուղից՝ 930մ հեռավորության վրա: Տարածքը իրենից ներկայացնում է կառուցապատումից ազատ, իրար հաջորդող մեկ հարթակ: Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում ծառեր և թփեր չկան, այն նախկինում օգտագործվել է որպես արոտավայր և այստեղ առկա է միայն վերականգնվող խոտածածկ, բնության հուշարձաններ և պատմամշակույթային հուշարձաններ, ՀՀ

կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան: Տարածքին ամենամոտը՝ «Գյուլագարակի» պետական արգելավայրն է, որի առավել մոտ գտնվող հատվածը դիտարկվող տարածքից հեռու է 6.7-7.0 կմ և այստեղ պլանավորված աշխատանքները ոչ մի բացասական ազդեցություն չեն կարող թողնել վրա:

Նախատեսվող գործունեության հողամասի մոտեցման ճանապարհը գրունտային ճանապարհ է, որի վերջին հատվածը անցնում է հողամասերի միջնամասով: Նախատեսվում է այդ հատվածի փոխարեն, նախատեսվող համալիրի և հարևան հողամասերի միջև երկու կողմից կառուցել են 5 մետրանոց գրունտային ճանապարհներ: Նշված ճանապարհների կառուցումը կիրականացվի պատվիրատուի սեփական հողերի:

Լեռնագրական տեսակետից նախագծվող աշխատանքների տարածքը Լոռվա բարձրադիր լեռնային սարահարթ է (1400-1600մ), որը հարավից սահմանափակված է Բազումի՝ 2992.0մ, արևմուտքից՝ Ջավախքի 3157.0մ և Վիրահայոց՝ 2142.0մ, իսկ արևելյան կողմից Լեջանի ՝ 2527.7մ լեռնաշղթաներով:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են մեզոզոյան նստվածքային (կրաքարեր, մերգելներ, ավազաքարեր, կոնգլոմերատներ), մեզոզոյ-կայնոզոյան հրաբխածին, հրաբխածին-նստվածքային (պորֆիրիտներ, տուֆաբրեկչիաներ, տուֆաավազաքարեր, տուֆակոնգլոմերատներ) և տարբեր հասակի ինտրուզիվ (պիրոքսենիտներ, գաբբրո-պիրոքսենիտներ, սերպենտինիտներ, նեֆելինային սիենիտներ) ապարներ:

Հիդրոերաերկրաբանական տեսակետից տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցող նշված ապարները, բացառությամբ կրաքարերի, բնորոշվում են թույլ ջրատարից ջրամերժ հատկություններով:

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի
28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ նախատեսվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացման մեծությունը կազմում է 0.4g:

Տարածքում առկա հողի բերրի շերտը՝ 40-50 սմ է, պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված «Հողի բերրի շերտի օգտագործման կարգ»- ով և 02.12.2017թ. -ի թիվ 1404 որոշմամբ: Ըստ կառուցապատման ուրվագծի անմիջապես կառուցապատման առավելագույն մակերեսը կարող է կազմել 13340 մ^2, հաշվի առնելով բերրի հողի միջին հզորությունը 45 սմ, հանվող բերրի հողի առավելագույն ծավալը կարող է կազմել՝ 6000մ^3: Բերրի հողը ամբողջությամբ օգտագործվելու է կանաչ տարածքների կազմակերպման համար, իսկ հանված գրունտը որպես ետլիցք:

Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Լոռու ֆլորիստիկ շրջանին, բուսածածկի կազմը տիպիկ լեռնատափաստանային է՝ տարախոտա-հացազգային համակեցություններով: Ամառը զով է, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ: Ձմեռը շատ ցուրտ է, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ - 5°C-ից մինչև - 12°C, հարաբերական խոնավությունը՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ:

Շահագործման փուլում ջրահեռացման նպատակով նախատեսվում է 750 – 800 մ երկարությամբ և առավելագույնը 0.20 մ տրամագծով խողովակի միջոցով միանալ Ագարակ բնակավայրի կոյուղատարին:

Համալիրի նախագծման աշխատանքների փուլում ձեռնարկողը համապատասխան հայտերով կդիմի «Գազպրոմ Արմենիա», «ՀԷՑ», «Վեոլիա ջուր» ընկերություններին և Լոռի Բերդ համայնքապետարանին համապատասխան ծառայությունների մատակարարման համար:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակը՝ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 912006010100 4/, 200 – 220 մ^3, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության համար նախատեսվող աշխատողները ընդգրկվելու են ազդակիր կամ մոտակա բնակավայրերի բնակիչները, որոնց համար վարձակալվելու է տուն Ագարակ գյուղում, հանգստի և տուրիզմի կենտրոնի տարածքում շինարարական աշխատանքների ժամանակ կենցաղային աղբ չի առաջանալու:

Համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղված հետևյալ միջոցառումները, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում, այդ թվում՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx,) արտանետումների քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերի պահանջները,
- կանաչապատման աշխատանքներից հետո՝ տնկված ծառերի խնամքի ապահովում և այլն:

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի մոտ 1,2% :

Պատճառաբանական մաս.Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Ագարակ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Լոռու մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության

ստորաբաժինները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցությունները իրենց բնույթով սահմանափակ են, կարճատև և կրում են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական պահանջներ

- Համալիրի կառուցման շինարարության մեկնարկը սկսել ՀՀ օրենքով սահմանված համապատասխան թույլտվությունների առկայության դեպքում:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել ատակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Ապրանքային բետոնի ձեռք բերումը և տեղափոխումը իրականացնել Հայտում նախատեսված ձևով: Իրավիճակից ելնելով, խիստ անհրաժեշտության պարագայում շինարարական հրապարակում բետոնի արտադրությունը իրականացնել միայն սահմանված կարգով համապատասխան թույլտվության առկայության դեպքում, բացառել բետոնի արտադրական սարքավորումների տեղադրումը շինարարական հրապարակում: Խուսափել շինարարական հրապարակում կամ հարակից հաղատարածքներում բետոնաջրերի արտահոսքից՝ պահպանել հողի աղտոտումը բետոնաջրիերից:
- Տարածքի կանաչապատումը և ծառատունկը իրականացնել համաձայն Լոռու մարզպետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի (մասնաճյուղի) նախագծի, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների

հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի վարչական սահմանում տուրիզմի և հանգստի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Ռուզան Մակինյան